

ԱՌԱԽՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Տէ՛ր, եթէ իմ շրթունքներըս բանաս՝ իմ բերանս քու օրհնութիւնդ պէտի երգէ: Օրհնեա՛լ ըլլայ համագոյ եւ միասնական, անբաժանելի Սուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Շնորհակալութի՛ւն կը յայտնենք քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը, որ հանգիստ եւ խաղաղ քուն մը պարգեւեցիր մեզի, եւ արթնցնելով՝ կարելիութիւնը տուիր, որ առաւօտ կանուխ երկրպագենք քու ահաւոր ու փառաւոր եւ սուրբ անունիդ: Կաղաչենք քեզի, Տէ՛ր, թոյլ տուր որ խաղաղութեամբ անցնենք մնացեալ օրը, եւ մեր պանդուխտի ամբողջ կեանքին ընթացքին մեզ քու երկիւղովդ ամբացուր եւ պահպանէ. որպէսզի այս աշխարհի մէջ փորձութիւններէ հեռու եւ անարատ կեանքով մը ապրելէ ետք, յաւիտենական կեանքիդ անխռով եւ խաղաղ նաւահանգիստը հասնինք մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովն ու մարդասիրութեամբը: Անոր հետ քեզի՝ Հօրդ եւ Սուրբ Հոգիին կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Գոհութի՛ւն քեզի, ո՛վ Տէր, մեր Աստուածը, որ քու ողորմութեամբըդ մեզ արթնցուցիր մեր գիշերային հանգիստէն: Մեր միտքերը եւս արթնցուր, Տէ՛ր Աստուած, որպէսզի քեզի դառնալով՝ արդարութիւն գործեն, եւ մեր այքերը տեսնեն քու փրկութիւնդ: Թող աստուածութիւնդ գայ եւ մեր մէջ բնակի, եւ ողորմութիւնդ հովանի եւ պահապան ըլլայ քեզի ծառայողներուն վրայ: Անոնց հետ՝ մեզ, քու ծառաներդ եւս արժանի ըրէ, որ գիշեր-ցերեկ եւ ամէն ժամ քու պատուիրաններուդ սիրովը բռնուած՝ միշտ անոնց մասին խորհինք, եւ գոհութեամբ փառաւորենք քեզ՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: